

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ԹԵՍՏ 4

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ
ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սնագրության համար:

1 Ո՞ր դեպքում է կիրառվում գծիկային գիծը.

- 1) անտեսանելի ուրվագծեր պատկերելիս
- 2) առանցքային գծեր պատկերելիս
- 3) չափագծերը պատկերելիս
- 4) տեսանելի ուրվագծեր պատկերելիս

2 Արտաքեր գծերը և չափագծերը գծվում են.

- 1) գծիկային գծով
- 2) հիմնական հոծ գծով
- 3) գծակետային գծով
- 4) բարակ հոծ գծով

3 Չափաթիվը գրվում է ձախ կողմից, եթե.

- 1) չափագիծը դասավորված է հորիզոնական
- 2) չափագիծը դասավորված է ուղղահիգ
- 3) չափագիծը դասավորված է պրոֆիլային հարթությունում
- 4) չափագիծը դասավորված է ֆրոնտալ հարթությունում

4 Շառավղի չափաթվի առջև դրվում է.

- 1) K տառը
- 2) M տառը
- 3) R տառը
- 4) D տառը

5 Մեծացման մասշտաբ է.

- 1) 1 : 2.5
- 2) 1 : 3
- 3) 3 : 1
- 4) 2.5 : 1

6 Գծագրական թղթի եզրերից ի՞նչ հեռավորության վրա է գծվում շրջանակը.

- 1) ձախից, վերևից, աջից և ներքևից 10-ական մմ
- 2) ձախից-20մմ, վերևից, աջից և ներքևից 5-ական մմ
- 3) ձախից-25մմ, վերևից, աջից և ներքևից 10-ական մմ
- 4) ձախից, վերևից, աջից և ներքևից 5-ական մմ

7

Առարկայի մտովի բաժանումն առանձին մասերի անվանում են.

- 1) երկրաչափական պատկերի կառուցում
- 2) էսքիզ
- 3) երկրաչափական ձևի վերլուծություն
- 4) փովածք

8

Չուգահեռ պրոյեկտման դեպքում բոլոր պրոյեկցիաները ստացվում են.

- 1) բնականից մեծ
- 2) 90° թեքությամբ
- 3) 45° թեքությամբ
- 4) բնական մեծությամբ

9

Կտրվածք է կոչվում այն պատկերը, որը.

- 1) պարզաբանում է առարկայի ներքին ձևը
- 2) ստացվում է կենտրոնական պրոյեկտումից
- 3) ստացվում է զուգահեռ պրոյեկտումից
- 4) պարզաբանում է առարկայի ներքին հատույթները

10

Կտրվածքներում գծապատումը կատարվում է.

- 1) 45° անկյան տակ
- 2) 60° անկյան տակ
- 3) 90° անկյան տակ
- 4) 30° անկյան տակ

11

Ինչպե՞ս է անցնում կտրող հարթությունը՝ հատակագիծը շինարարական գծագրի վրա ցուցադրելու համար.

- 1) պատուհանագոգի մակարդակով
- 2) առաջին հարկի հատակի մակարդակով
- 3) առաստաղից անմիջապես ներքև
- 4) պատուհանագոգերի մակարդակից մի փոքր վերև

12

Ծառի ո՞ր տեսակը սաղարթավոր չէ.

- 1) մայրի
- 2) հաճարենի
- 3) հացենի
- 4) կաղնի

13 Օտոի բնի հիմնական հատույթները լինում են.

- 1) լայնական, շառավղային, եզրային
- 2) շառավղային, եզրային
- 3) լայնական, շառավղային, տանգենցիալ
- 4) շառավղային, տանգենցիալ

14 Սդոցանյութի ո՞ր տեսակին են անվանում չորսվակ.

- 1) որի հաստությունը փոքր է 100 մմ-ից, իսկ լայնությունը չի գերազանցում հաստության կրկնապատիկը
- 2) որը ստացվում է գերանը երկայնական ուղղությամբ չորս հավասար մասերի բաժանելով
- 3) որի լայնությունը երկու և ավելի անգամ մեծ է հաստությունից
- 4) որի լայնությունը և հաստությունը մեծ են 100 մմ-ից

15 Գործողություն, որի ժամանակ փայտե դետալներին տալիս են համապատասխան ձև, ճշգրիտ չափեր և անհրաժեշտ մաքրություն.

- 1) սդոցում
- 2) շաղափում
- 3) խարտոցում
- 4) ռանդում

16 Մշակված մակերևույթի որակը համարվում է բավարար, եթե.

- 1) քանոնի եզրը՝ երկայնական, լայնական ուղղություններով և անկյունագծերով, առանց բացակների կիպ հավում է մշակված մակերևույթին
- 2) մշակված մակերևույթը փոխուղղահայաց է նախապատրաստվածքի ճակատին
- 3) քանոնի եզրը՝ երկայնական, լայնական ուղղություններով և եզրերով, առանց բացակների կիպ հավում է մշակված մակերևույթին
- 4) մշակված մակերևույթը փոխուղղահայաց է նախապատրաստվածքի եզրին

17 Ի՞նչ է շպոնը.

- 1) սալիկներ, որոնք ստացվել են թեփի, տաշեղների և փայտի փոշուց
- 2) փայտի բարակ շերտ, որը ստացվում է ռանդման կամ ծլեպման միջոցով
- 3) փայտի բարակ շերտ, որը ստացվում է սղոցման կամ թործման միջոցով
- 4) սալիկներ, որոնք ստացվել են շոգեխաշած և մանրացված փայտի ամենափոքր մանրաթելերի մամլման միջոցով

18

Ի՞նչ գործիք են օգտագործում նախապատրաստվածքի վրա չափանշման գուգահեռ գծեր քաշելու համար.

- 1) անկյունաքանոն
- 2) կարկին
- 3) խազքաշ
- 4) անկյունարդ

19

Ինչպիսի՞ ձևի ատամներով սղոց են օգտագործում փայտանյութի երկայնական կտրման համար.

- 1) մեծ թեքությամբ
- 2) փոքր թեքությամբ
- 3) կոր
- 4) ուղիղ

20

Ի՞նչ է չափրաստումը.

- 1) սղոցի ատամների թեքումն է հերթականությամբ տարբեր կողմեր
- 2) սղոցի ատամների ուղղումն է
- 3) սղոցի ատամների գագաթների հավասարեցումն է ուղիղ գծով
- 4) սղոցի ատամների սրումն է

21

Ինչպե՞ս են անվանում փայտի վերջնամշակման համար նախատեսված թործիչ գործիքը.

- 1) ֆուգան
- 2) իզմիր
- 3) նրբառանդա
- 4) ռանդա

22

Ի՞նչ է նշվում տեխնոլոգիական քարտում.

- 1) արտադրանքի տեսակը, գրաֆիկական պատկերը, գործիքները և հարմարանքները
- 2) գործողությունների կատարման հաջորդականությունը, գրաֆիկական պատկերը, չափանշման եղանակները
- 3) փայտանյութի տեսակը, գրաֆիկական պատկերը, գործիքները և հարմարանքները
- 4) գործողությունների կատարման հաջորդականությունը, գրաֆիկական պատկերը, գործիքները և հարմարանքները

23

Ինչպե՞ս է կոչվում փայտը 45° և 90° անկյան տակ սղոցելու հարմարանքը.

- 1) անկյունասղոցման ուղղորդ
- 2) ռեյսմուս
- 3) անկյունասղոցման արկղ
- 4) հենակ

24

Նախապատրաստվածքի ավելցուկային շերտը, որը կտրող գործիքով պետք է հեռացվի հետագա մշակման ընթացքում, անվանում են.

- 1) թողվածք
- 2) բազային շերտ
- 3) մշակվող շերտ
- 4) էլուստ

25

Տախտակի երկայնական լայն մակերևույթն անվանում են.

- 1) եզր
- 2) ճակատ
- 3) կող
- 4) եզրաշերտ

26

Մեխերի առանցքների հեռավորությունը մանրաթելերի ուղղությամբ պետք է լինի ոչ պակաս.

- 1) 5d
- 2) 4d
- 3) 10d
- 4) 15d

27

Ինչո՞վ են պատում տանիքի թիթեղները կոռոզիայից պաշտպանելու համար.

- 1) երկաթով
- 2) արույրով և ցինկով
- 3) անագով և ցինկով
- 4) պղնձով

28

Ի՞նչ հաստոցների միջոցով են ստանում տեսակավոր գլանվածքը.

- 1) գլոցման
- 2) դրոշմման
- 3) ձուլման
- 4) կոման

29

Ի՞նչ է չափանշումը.

- 1) ըստ գծագրի՝ նախապատրաստվածքի մակերևույթի վրա դետալի մշակման ենթակա եզրագծերը ցույց տվող գծերի (խազերի) անցկացման գործողությունը
- 2) ըստ գծագրի՝ նախապատրաստվածքի մակերևույթի վրա դետալի եզրագծերի և մշակման ենթակա տեղամասերը ցույց տվող գծերի (խազերի) անցկացման գործողությունը
- 3) ըստ գծագրի՝ նախապատրաստվածքի մակերևույթի վրա դետալի արտատպման գործողությունը
- 4) ըստ գծագրի՝ նախապատրաստվածքի մակերևույթի վրա դետալի եզրագծերի անցկացման գործողությունը

30

Ի՞նչ մետաղների համաձուլվածք է արույրը.

- 1) պղնձի և բրոնզի
- 2) պղնձի և ցինկի
- 3) պղնձի և կապարի
- 4) պղնձի և անագի

31

Թուջ կոչվում է այն համաձուլվածքը, որում ածխածնի պարունակությունը հավասար է.

- 1) 1,14 % -ից մինչև 5,67%
- 2) 2,12 % -ից մինչև 6,67%
- 3) 1,12 % -ից մինչև 5,67%
- 4) 2,14 % -ից մինչև 6,67%

32

Պողպատների ջերմամշակման հիմնական տեսակներն են.

- 1) թրծաթողումը, նորմալացումը, մխումը, մխամեղմումը
- 2) թրծաթողումը, բարելավումը, մխումը, մխամեղմումը
- 3) թրծումը, բարելավումը, մխումը, մխամեղմումը
- 4) թրծումը, նորմալացումը, մխումը, մխամեղմումը

33

Մեկ դյույմը հավասար է.

- 1) 24,5 մմ
- 2) 21,4 մմ
- 3) 25,4 մմ
- 4) 20,5 մմ

34

Փականագործական մետաղապողոցի սոցաժապավենը շրջանակի մեջ տեղադրում են ատամներն ուղղված դեպի.

- 1) բռնակի հակառակ ուղղությամբ
- 2) բույթերը
- 3) բռնակը
- 4) անշարժ գլխիկի ուղղությամբ

35

Հատիչի սրման անկյունը պողպատներ հատելիս հավասար է.

- 1) 35° - 40°
- 2) 60°
- 3) 45° - 60°
- 4) 90°

36

Հատման ժամանակ տարբերում են մուրճով հարվածի հետևյալ տեսակները.

- 1) արմունկային և ուսային
- 2) դաստակային, արմունկային և ազդրային
- 3) արմունկային և ազդրային
- 4) դաստակային, արմունկային և ուսային

37

Խարտոցներն ըստ աշխատամասի 10 մմ երկարության վրա եղած ծրատվածքների թվի լինում են.

- 1) կետային, մաքրատաշ, թավշյա
- 2) կոպտատաշ, մաքրատաշ, կետային
- 3) կոպտատաշ, մաքրատաշ, թավշյա
- 4) կոպտատաշ, մաքրատաշ, խաչաձև

38

Ի՞նչ կտրիչից են օգտվում խառատային հաստոցով աստիճանավոր լիսեռներ մշակելիս.

- 1) անցահատ հենակային
- 2) անցահատ ուղիղ
- 3) ենթահատ
- 4) կտորահատ

39

Նախապատրաստվածքի մեկ պտույտի ընթացքում կտրիչի տեղափոխման մեծությանն անվանում են.

- 1) հաճախություն
- 2) կտրման խորություն
- 3) մատուցում
- 4) կտրման արագություն

40

Մետրական պարուրակների եռանկյուն պրոֆիլի գագաթի φ անկյունը հավասար է.

- 1) 90°
- 2) 45°
- 3) 55°
- 4) 60°

41

Ֆրեզերման ժամանակ մատուցում ասելով հասկանում են.

- 1) կտրման խորությունը
- 2) կտրման արագությունը
- 3) մշակվող նախապատրաստվածքի տեղաշարժը պտտվող ֆրեզի նկատմամբ
- 4) ֆրեզի պտտման հաճախականությունը

42

Ինչպե՞ս են անվանում այն սարքավորումը, որը փոխակերպում է էներգիան, նյութերը կամ տեղեկատվությունը.

- 1) մեքենա
- 2) դետալ
- 3) աշխատանքի գործիք
- 4) մեխանիզմ

43

Ըստ գործողության բնույթի մեքենաները լինում են.

- 1) ստատիկ
- 2) էներգախնայող
- 3) դինամիկ
- 4) էներգետիկական

44

Ո՞ր մեքենան աշխատանքային չէ.

- 1) էլեկտրաշարժիչ
- 2) փոխադրիչ
- 3) տեխնոլոգիական
- 4) տրանսպորտային

45

Էլեկտրական լարումը չափում են.

- 1) վատամետրով
- 2) օհմմետրով
- 3) վոլտմետրով
- 4) ամպերմետրով

46

Վոլտմետրը էլեկտրական շղթային միացվում է.

- 1) ամպերմետրից առաջ
- 2) գուգահեռ
- 3) ամպերմետրից հետո
- 4) հաջորդաբար

47

Արմատապտղավոր բույսեր են.

- 1) ճակնդեղ
- 2) դդմիկ
- 3) տաքդեղ
- 4) գինձ

48

Հացահատիկային բույս չէ.

- 1) եգիպտացորեն
- 2) բրինձ
- 3) սոյա
- 4) աշորա

49

Մսամթերքի ջերմային մշակումը ո՞ր գործընթացի հիմնական մասն է.

- 1) ֆիզիկական
- 2) տեխնիկական
- 3) քիմիական
- 4) տեխնոլոգիական

50

Բանջարեղենի հիմնական խմբից չէ.

- 1) սոխուկավորներ
- 2) պտղաբանջարներ
- 3) արմատաունդավոր
- 4) արմատապտղավոր

51

Տերևաբանջարների թվին է պատկանում.

- 1) անիսոն
- 2) ստեպղին
- 3) սեզատերև
- 4) նեխուր

52 Ո՞ր վիտամինը չի համարվում ճարպալույծ.

- 1) D
- 2) C
- 3) K
- 4) A

53 Ո՞ր վիտամիններն են ամրացնում ոսկորները և լավացնում ինքնազգացողությունը.

- 1) E
- 2) B
- 3) D
- 4) A

54 Վիտամին A պարունակող սննդամթերք չէ.

- 1) կարագ
- 2) կիվի
- 3) թուրինջ
- 4) ձու

55 Շոգեեփն ի՞նչի միջոցով է պատրաստում ուտեստը.

- 1) ծխահարման
- 2) միկրոալիքների
- 3) ջրային բաղնիքի
- 4) տապակման

56 Ի՞նչ է կարվինգը.

- 1) ձևավորման արվեստ
- 2) հարմարադրում
- 3) հարմարադասում
- 4) դեկորատիվ ներկում

57 Պարզ ուսագծային կարվածքի գծագրի կառուցման համար անհրաժեշտ չափս է.

- 1) սեղմոնների երկարությունը
- 2) ներքին կարի երկարությունը
- 3) սեղմոնի լայնությունը
- 4) մեջքի երկարությունը մինչև գոտկատեղ

58

Մեջքի երկարության չափը մինչև գոտկատեղ վերցնում են.

- 1) վեցերորդ ողից մինչև գոտկատեղ
- 2) հինգերորդ ողից մինչև գոտկատեղ
- 3) յոթերորդ ողից մինչև գոտկատեղ
- 4) ութերորդ ողից մինչև գոտկատեղ

59

Ձեռքի շարժաբերով կարի մեքենայի մաս չէ.

- 1) սեղմման թաթիկ
- 2) փոկ
- 3) սևեռիչ
- 4) թափանիվ

60

Հագուստի գոտկային տեսակ չէ.

- 1) կիսաշրջագգեստ
- 2) անդրավարտիք
- 3) շրջագգեստ
- 4) տաբատ

61

Բնական մանրաթելի տեսակ չէ.

- 1) կենդանական
- 2) ացետատային
- 3) հանքային
- 4) բուսական

62

Ըստ պատրաստման հումքի գործվածքները լինում են.

- 1) քիմիական և տեխնոլոգիական
- 2) արհեստագործական և կենդանական
- 3) ֆիզիկական և բուսական
- 4) բնական և քիմիական

63

Ասեղնագործության հիմնական գործիքներից է.

- 1) թակ
- 2) քարկիթ
- 3) կտուտիչ
- 4) քարգահ

64 Ասեղնագործության մեջ օգտագործվող կարատեսակներից չէ.

- 1) ճյուղակար
- 2) եղնակար
- 3) շուլակար
- 4) թելքաշ

65 Կարպետն ի՞նչով է տարբերվում գորգից.

- 1) զարդաձևերով
- 2) գեղագարդումով
- 3) թելախավով
- 4) զարդանախշերով

66 Կտուտիչը նախատեսված է.

- 1) գործվածքի շարքերը նստեցնելու համար
- 2) խավը սանրելու համար
- 3) թելը հանգուցելու և կտրելու համար
- 4) խավը խուզելու և հավասարեցնելու համար

67 Հայկական գորգի առանձնահատկություններից է.

- 1) մեկուկես հանգույցը
- 2) մեկ հանգույցը
- 3) կես հանգույցը
- 4) կրկնակի հնագույցը

68 Բրդե մանրաթելերի 96%-ը ստանում են.

- 1) լամայի բրդից
- 2) ուղտի բրդից
- 3) այծի բրդից
- 4) ոչխարի բրդից

69 Ըստ կառուցվածքի հագուստները լինում են.

- 1) ուսագծային և կոնքային
- 2) ուսային և գոտկային
- 3) գոտկային և կոնքային
- 4) ուսային և թևքային

70

Ի՞նչ է իրենից ներկայացնում հագուստի պատրաստման ժամանակ կիրառվող ձևանր.

- 1) տեխնիկական գծագիր
- 2) փոքրացված չափերով գծագիր
- 3) բնական չափերով գծագիր
- 4) մեծացված չափերով գծագիր

71

Մասնագիտության ընտրության բանաձևերից ո՞րն է ճիշտ.

- 1) ուզում եմ, կարող եմ, պետք է
- 2) պահանջված է, պետք է, ուզում եմ
- 3) ուզում եմ, կարող եմ, հնարավոր է
- 4) պահանջված է, պետք է, կարող եմ

72

Մասնագիտությունների դասակարգման ո՞ր խմբի ներկայացուցիչները գործ ունեն աշխատանքի անշունչ առարկաների, տեխնիկական միջոցների ստեղծման, մոնտաժի, հավաքման և կարգաբերման հետ.

- 1) մարդ-կենդանի բնություն
- 2) մարդ-տեխնիկա
- 3) մարդ-մարդ
- 4) մարդ-նշանային համակարգ

73

Նախագծի կատարման ո՞ր փուլում է տրվում տնտեսագիտական և էկոլոգիական գնահատական.

- 1) որոնողական
- 2) տեխնոլոգիական
- 3) վերլուծական
- 4) կոնստրուկտորական

74

Ի՞նչ է ուսումնասիրում տնտեսագիտությունը.

- 1) հասարակության տնտեսական կյանքի զարգացման օրինաչափությունները
- 2) հասարակության պահանջարկի ձևավորման մեխանիզմները
- 3) հասարակության առաջարկի ձևավորման մեխանիզմները
- 4) հասարակության գնողունակության բարձրացման օրինաչափությունները

75

Անձի նյութական կամ հոգևոր պահանջները բավարարելու անհրաժեշտությանն անվանում են.

- 1) կարիք
- 2) բյուջե
- 3) շահույթ
- 4) եկամուտ

76

Ի՞նչ է եկամուտը.

- 1) ընտանիքի կարիքների բավարարման համար նախատեսված ֆինանսական միջոցներ
- 2) անձի կարիքների բավարարման համար նյութական միջոցների ձեռքբերումը
- 3) փող կամ նյութական արժեքներ, որոնք կարող են լինել աշխատավարձի, պարգևատրման կամ նվերի տեսքով՝ կատարված աշխատանքի կամ մատուցած ծառայության դիմաց
- 4) փող կամ նյութական արժեքներ, որոնք ապահովում են ապրանքների ձեռքբերումը

77

Ո՞ր դեպքում է ընտանեկան բյուջեն հավասարակշռված.

- 1) երբ եկամուտները գերազանցում են ծախսերին
- 2) երբ ծախսերը գերազանցում են եկամուտներին
- 3) երբ եկամուտները չեն գերազանցում ծախսերին
- 4) երբ եկամուտներն ու ծախսերը հավասար են

78

Ի՞նչ է ձեռնարկատիրական գործունեությունը.

- 1) ապրանքների և ծառայությունների ոլորտում բնակչության կարիքների բավարարումը
- 2) պետական բյուջեի համալրումը հարկային եկամուտներով
- 3) նոր մտահղացումների որոնումը
- 4) ապրանքների և ծառայությունների վաճառքն է որոշակի գնով, որն ապահովում է շահույթի համակարգված ստացում

79

Տնտեսվարող սուբյեկտներ կարող են հանդիսանալ միայն.

- 1) ֆիզիկական և իրավաբանական անձինք
- 2) իրավաբանական անձինք
- 3) անհատները
- 4) ֆիզիկական անձինք

Ձեռնարկատիրական գործունեության կարևորագույն հատկանիշներն են.

- 1) ռիսկ և անորոշություն, անկախություն և գործունեության ազատություն, հույս նորարարության վրա
- 2) անկախություն, նորարարության վրա հույս դնելը
- 3) նոր գաղափարների մշտական որոնում
- 4) նոր գաղափարների մշտական որոնում, ռիսկ, տնտեսական կախվածություն երկրի մակրոտնտեսական իրավիճակից